ՆԱԽԱԳԻԾ

ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությունը (այսուհետ միասին՝ «Կողմեր»),

Հաշվի առնելով, որ Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի (այսուհետ՝ «Ծրագիր») նախապատրաստումը, շինարարությունը և շահագործումը բխում է Կողմերի փոխադարձ շահերից,

Հաշվի առնելով, որ Ծրագիրը կնպաստի Հայաստանի Հանրապետության բնակչության սոցիալական և տնտեսական բարեկեցությանը,

Հաշվի առնելով, որ Մտադրությունների մասին համաձայնության կնքումը (այսուհետ՝ «Համաձայնություն») կնպաստի փոխադարձ վստահության վրա հիմնված հարաբերությունների ամրապնդմանը և համագործակցության խթանմանը,

կնքեցին սույն Համաձայնությունը և պայմանավորվեցին հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1. Համաձայնության նպատակը

1.1. Սույն Համաձայնության նպատակն է «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությանը (այսուհետ՝ «Ընկերություն») ընդերքի մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքի պատշաճ իրացման և Ծրագրի նախապատրաստման, շինարարության, շահագործման և հանքի փակման փուլերի (այսուհետ միասին՝ «Ծրագրի փուլեր») իրականացման ընթացքում Կողմերի՝ փոխվստահության վրա հիմնված հարաբերությունների ամրապնդման մտադրության արտահայտումը:

1.2. Սույն Համաձայնության նպատակից ելնելով՝ Կողմերն ընդունում են, որ Ծրագրի անխափան իրականացման և իրենց համագործակցային հարաբերությունների հետագա ամրապնդման նպատակով Կողմերն իրենց իրավասությունների շրջանակներում ներդնելու են բոլոր ջանքերը՝ ապահովելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտավորությունների փոխադարձ կատարումը և իրավունքների լիարժեք իրականացումը, ինչպես նաև այն պայմանների ապահովումը, որոնք անհրաժեշտ են Ծրագրի անխոչընդոտ իրագործման համար՝ բացառապես առաջնորդվելով կիրառելի ՀՀ օրենսդրությամբ:

ՀՈԴՎԱԾ 2. Համագործակցության պայմանները

2.1. Սույն Համաձայնությամբ Կողմերն իրենց հետագա համագործակցության և ՀՀ օրենսդրությամբ իրենց վերապահված իրավունքների և պարտականությունների

շրջանակներում կգործադրեն բոլոր ջանքերը Ծրագրի փուլերի արդյունավետ իրականացման համար: Կողմերը կարևորում են հետևյալ պայմանները՝

1) Հայաստանի բնակչության սոցիալական և տնտեսական բարեկեցության խթանում և պահպանում, ինչպես նաև Ծրագրի իրականացմամբ պայմանավորված՝ բոլոր բնապահպանական ու սոցիալական ազդեցությունների նվազեցում և արդյունավետ մոնիթորինգ,
2) Ծրագրի շինարարության և շահագործման փուլերի ընթացքում համայնքների մասնակցության և զարգացման ապահովում, ինչպես նաև տեղական շուկայի ու զբաղվածության խթանում,
3) Նորմատիվային դաշտի հետագա կատարելագործման միջոցով Ընկերության հետ շարունակական համագործակցության իրականացում,
4) Ընկերության կողմից Ծրագրի անխափան իրականացման համար Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից օրենքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում հնարավոր միջոցների իրականացում, ներառյալ՝ Ծրագրի բոլոր տեղամասերին անխոչընդոտ հասանելիության, գործող օրենսդրության շրջանակներում Ծրագրի համար անհրաժեշտ բոլոր թույլտվությունների/լիցենզիաների ժամանակին տրամադրման/երկարաձգման/կրկին տրամադրման առնչությամբ աջակցության ապահովում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հիմքերով և կարգով,
5) Ընկերության կողմից Ծրագրի շինարարության, շահագործման և փակման փուլերի վերաբերյալ ՀՀ պետական մարմիններին և պաշտոնատար անձանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ֆինանսական ու արտադրական համապատասխան տեղեկատվության տրամադրում: Կողմերն ընդունում են, որ այն դեպքում, երբ առկա է կիրառելի օրենսդրությամբ սահմանված տեղեկատվության ազատության սահմանափակում, Ընկերությունը կարող է տրամադրել նշված տեղեկատվությունն՝ այդ տեղեկատվությունը տնօրինող երրորդ անձի գրավոր կամ բանավոր կերպով արտահայտված համաձայնության հիման վրա,
6) Բանակցային եղանակով և հնարավորին սեղմ ժամկետներում Ծրագրի առնչությամբ տարաձայնությունների և/կամ վեճերի լուծում,
7) Ընկերության կողմից Հայաստանի Հանրապետությունում իրականացվող գործունեության և դրանից բխող հարաբերությունների նկատմամբ կիրառվում են ՀՀ օրենսդրությամբ և ՀՀ մասնակցությամբ միջազգային պայմանագրերով նախատեսված դրույթները:

ՀՈԴՎԱԾ 3. Ներդրումներ

3.1. Ընկերությունը նախատեսում է ներդրումների տեսքով ներգրավել ավելի քան 150,000,000 ԱՄՆ դոլար՝ Ծրագրի նախապատրաստման, շինարարության և շահագործման փուլերի համար:

ՀՈԴՎԱԾ 4. Սոցիալական պատասխանատվություն

4.1. Կողմերի և ազդակիր համայնքների համագործակցային հարաբերությունները շարունակաբար բարելավելու, Ընկերության համար համայնքային կայուն զարգացման առաջնահերթությունն ընդգծելու, համայնքային բնակչության կենսամակարդակի բարձրացմանը և ազդակիր համայնքների տնտեսական ակտիվությանը և դիվերսիֆիկացմանը նպաստելու նպատակով՝ Ընկերությունը, առաջնորդվելով բացառապես իր ազատ կամաարտահայտմամբ, Ընկերության սոցիալական պատասխանատվության գործելաոճի ամրապնդման նպատակով և շրջանակներում ազդակիր համայնքներին կտրամադրի տարեկան ֆինանսական աջակցություն:

Նշված ֆինանսական աջակցությունը շինարարության փուլի ընթացքում կկազմի 7մլն. ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ յուրաքանչյուր 12-ամսյա ժամանակահատվածի համար: Ծրագրի շահագործման փուլի մեկնարկից ի վեր տարեկան ֆինանսական աջակցությունը կհաշվարկվի Ընկերության՝ ՀՀ հարկային օրենսգրքի 209-րդ հոդվածի իմաստով նախքան հարկումը շահույթի նկատմամբ 4% դրույքաչափով (տակայն ոչ պակաս, քան 7մլն. ԱՄՆ դոլարին (հաշվարկված 1,800 ԱՄՆ դոլար/ունցիա ոսկու գնի հիման վրա) համարժեք ՀՀ դրամ (ենթակա է վերանայման/ճշգրտման, եթե ոսկու գինն իջնում է 1,500 ԱՄՆ դոլար/ունցիա շեմից ներքև երկարաժամկետ՝ 6-ամսյա կտրվածքով՝ հիմք ընդունելով սույն Համաձայնության թիվ 1 հավելվածում ներկայացված աղյուսակը)): Այն դեպքում, երբ Ծրագրի շահագործման փուլի առաջին և վերջին օրացուցային տարիները ներառում են Ծրագրի այլ փուլերին վերագրվող ժամանակահատվածներ, ապա տարեկան ֆինանսական աջակցության նվազագույն գումարը ենթակա է համամասնորեն նվազեցման՝ բացառելով այն ամիսները, որոնք համընկել են Ծրագրի այլ փուլերի հետ:

Աջակցության տրամադրումը շինարարության փուլում 7մլն. ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով առաջին 12-ամսյա ժամանակահատվածի կտրվածքով նախատեսվում է իրականացնել շինարարության փուլի մեկնարկից սկսած առաջին 6 ամիսների ընթացքում: Շինարարության փուլի մնացած ամիսների համար ֆինանսական աջակցության գումարը կհաշվարկվի համամասնորեն՝ ըստ ամիսների, և կտրամադրվի ամենաուշը Ծրագրի շահագործման փուլի մեկնարկից 1 ամսվա ընթացքում:

Ծրագրի շահագործման փուլի յուրաքանչյուր տարվա համար նվազագույն՝ 7մլն. ԱՄՆ դոլարին (կամ վերանայված/ճշգրտված/համամասնորեն նվազեցված գումարին) համարժեք ՀՀ դրամի աջակցությունը նախատեսվում է տրամադրել համապատասխան օրացուցային տարվա վերջին եռամսյակում, իսկ այդ օրացուցային տարվա կտրվածքով ձևավորված շահույթի գումարից կախված 7մլն. ԱՄՆ դոլարին (կամ վերանայված/ճշգրտված/համամասնորեն նվազեցված գումարին) համարժեք ՀՀ դրամը գերազանցելու դեպքում գերազանցող մասը՝ համապատասխան տարվա կտրվածքով Ընկերության կողմից տարեկան հարկային հաշվետվությունների ներկայացումից հետո 3 ամսվա ընթացքում:

Ֆինանսական աջակցության հաշվարկման բանաձևը չի կարող փոփոխվել Ծրագրի ընթացքում, բացառությամբ Կողմերի համաձայնությամբ սահմանված դեպքերի, և չի կարող սահմանվել բացառապես Ընկերությանը վերագրելի լրացուցիչ պետական կամ տեղական վճար/հարկ: Ընկերությունն ակնկալում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կձեռնարկի համապատասխան միջոցներ ապահովելու սույն 4-րդ հոդվածով սահմանված Ընկերության պարտավորությունների ամրագրումն Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման 26.09.2012թ. թիվ ՊՎ-245 պայմանագրում՝ որպես վերջինիս անբաժանելի մաս:

4.2. Սույն Համաձայնության 4.1. կետի համաձայն ստացված ֆինանսական աջակցության ամբողջ գումարն ազդակիր համայնքներում հասցեական և արդյունավետ օգտագործման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունն անհրաժեշտության դեպքում Ընկերության հետ կմշակի համապատասխան ընթացակարգեր:

4.3. Վերահաստատելով իր համագործակցային մոտեցումը՝ Ընկերությունը նախատեսում է թարմացնել և վերամշակել համայնքների ներգրավման և զարգացման պլանները յուրաքանչյուր ազդակիր համայնքի համար, ինչպես նաև ապահովել, որպեսզիհամայնքների համար օգտակար լինի Ծրագրին մասնակցությունը՝ նախապես համաձայնեցված և կայուն ձևով:

ՀՈԴՎԱԾ 5. Մասնակցային մոնիթորինգ

5.1. Ընկերությունը կապահովի սեփական բնապահպանական մոնիթորինգի տվյալների համաժամանակյա տրամադրում՝ դրանով իսկ հնարավորություն տալով Հայաստանի Հանրապետության կառավարությանը և շահագրգիռ այլ կողմերին մասնակցել Ընկերության հետ միասին արդար և թափանցիկ բնապահպանական մոնիթորինգային ծրագրին:

5.2. Մասնակցային բնապահպանական մոնիթորինգը կմեկնարկի անմիջապես Ծրագրի շինարարության փուլը վերսկսելուց հետո, որն ակնկալվում է 2021 թվականին:

ՀՈԴՎԱԾ 6. Այլ պայմաններ

6.1. Սույն Համաձայնությունը կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով: Համաձայնության հայերեն և անգլերեն տեքստերի միջև անհամապատասխանությունների դեպքում, գերակայությունը տրվում է հայերեն տեքստին: Համաձայնությունը կնքված է 4 օրինակներից: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնության երկուական օրինակ: Կողմերը հավաստում են, որ սույն Համաձայնությունը չի հանդիսանում իրավական առումով պարտավորեցնող պայմանագիր կամ որևէ իրավունքի համաձայն իրավական պարտավորություններ սահմանող կամ քաղաքացիական իրավական հետևանքներ առաջացնող փաստաթուղթ: Սույն Համաձայնությունը, դրան կից փաստաթղթերը, ինչպես նաև Համաձայնության ստորագրման փաստը և դրանից հետո դրա շրջանակներում որևէ գործողությունների իրականացումը ՀՀ իրավունքի և կիրառելի միջազգային իրավունքի

տեսանկյունից չպետք է մեկնաբանվի որպես Հայաստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության կառավարության, ՀՀ ցանկացած պետական մարմնի կամ գերատեսչության կամ պաշտոնատար անձի կողմից որևէ փաստական հանգամանքի ընդունում կամ հերքում կամ որևէ պատասխանատվության ընդունում:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ՝	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԵՊՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ՝
{----------}	{----------}
անուն, ազգանուն	անուն, ազգանուն
{----------}	{----------}
պաշտոն	պաշտոն
{----------}	{----------}
ստորագրման ամսաթիվ	ստորագրման ամսաթիվ

ՆԱԽԱԳԻԾ

Մտադրությունների մասին համաձայնության՝ կնքված .....2021թ.
թիվ 1 հավելված

Ընկերության կողմից տրամադրման ենթակա ֆինանսական աջակցության գումարի նախահաշվարկ
Լոնդոնի մետաղների բորսայի (ԼՄԲ) գների հիման վրա

Ոսկու միջին գինն՝ ըստ ԼՄԲ-ի [ԱՄՆ դոլար/ունցիա]	Տարեկան ֆինանսական աջակցության գումարը՝ հաշվարկված Ընկերության՝ << հարկային օրենսգրքի 209-րդ հոդվածի իմաստով նախքան հարկումը շահույթի նկատմամբ 4% դրույքաչափով [միլիոն ԱՄՆ դոլար]	Ընկերության կողմից տրամադրման ենթակա տարեկան ֆինանսական աջակցության նվազագույն գումարը [միլիոն ԱՄՆ դոլար]
2000	9.2	9.0
1900	8.4	
1800	7.5	7.0
1700	6.7	
1600	5.9	
1500	5.0	
1400	4.2	5.0
1300	3.4	